51. Բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և ,Փոխանցվում է գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

52. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում

է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում: Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

53. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

54. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

VII. Գնահատման սանդղակը և նշագրումը

55. ՎՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

56. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է ,չստուգվածե, կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

57. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

58. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս ,Ակադեմիական ազնվության կարգեր) այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

VIII. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

59. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր

ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

60. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

61. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

62. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

63. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$ԳԿ = \sum (Կրեդիտ)$$

64. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$ՎՄ = \sum (Կրեդիտ \times ԹԳ),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ \times 72 = 360` 500 հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

65. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

66. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

67. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ` մեկ կիսամյակի համար):

68. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

X. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

69. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

70. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի` քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

71. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

72. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

73. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

74. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

XI. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

75. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

76. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

77. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ (գերազանցե գնահատականներ):

78. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

XIII. Կրեդիտների փոխանցումը

79. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն ,Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի:

XIV. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

80. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

81. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

83. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

84. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կան ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12
61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

Հավելված 2

Ուսումնառության արդյունքների գնահատման 100 -միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5- բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100- բալանոց համակարգի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«գերազանցե (5)	96-100	A ⁺
«գերազանցե (5)	91-95	A
«գերազանցե (5)	86-90	A ⁻
«լավե (4)	81-85	B ⁺
«լավե (4)	76-80	B
« լավե (4)	71-75	B ⁻
«բավարարե (3)	67-70	C ⁺
«բավարարե (3)	62-66	C
«բավարարե (3)	58-61	C ⁻
«անբավարարե	0-57	D
«ստուգվածե	58-100	S

Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՄԻ կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է բանասիրական ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ

բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու
չափանիշները:

2. 023102.01.6 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտության տեղեկագիրք

I. Ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական առարկաներ

Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (2կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)
1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա V-XIX դարերի հայ ազատագրական պայքարի պատմությունը,
2. կկարողանա ներկայացնել Հայաստանի ազատագրության ծրագրերը
3. կկարողանա ներկայացնել հայ ազատագրական շարժման նախադրյալները, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորումը
4. կտիրապետի հայ ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների
5. կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. V դ ազատագրական պայքարը Թեմա 2. VI-VII դդ. ազատագրական պայքարը: Թեմա 3. VIII-IX դդ ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ Թեմա 4. Հայաստանի ազատագրական ծրագրերը Թեմա 5. Հայ ժողովրդի ազատագրական որոնումները XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին քառորդին Թեմա 6. Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության նրա ծրագիրը Թեմա 7. Հայաստանի ազատագրության

ծրագրերը XVIII դարի II կեսին **Թեմա 8.** Ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում **Թեմա 9.** Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին **Թեմա 10.** Հայ հասարակական քաղաքական հոսանքները **Թեմա 11** Արևմտահայ ազգային ազատագրական շարժումների վերելքը XIX դ. 90-ական թթ: **Թեմա 12.** Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացումը: **Թեմա 13.** Ֆիդայական շարժումը: **Թեմա 14.** Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները:

Պ/բ0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (2կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության նոր շրջանի ազատագրական պայքարի պատմության, Հայոց Մեծ Եղեռնի, հայոց պետականության պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. իմանա Հայոց Մեծ Եղեռնի պատմությունը, կկարողանա ներկայացնել 1915թ. ինքնապաշտպանական մարտերը
2. կկարողանա ներկայացնել մայիսյան հերոսամարտերը և հայոց պետականության վերականգնման նախադրյալները
3. կտիրապետի արցախյան շարժման և անկախ պետականության վերականգնման պատմությանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Ազգային կուսակցությունների առաջացումը: **Թեմա 2.** Հայկական հարցը 1912-1914թթ.: **Թեմա 3** Հայոց Մեծ Եղեռնը: **Թեմա 4.** 1915թ. ինքնապաշտպանական մարտերը: **Թեմա 5** 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը: **Թեմա 6.** Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ. **Թեմա 7.** Արցախյան շարժման նոր փուլը: **Թեմա 8.** Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը: **Թեմա 9.** Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները:

Հ/Բ0022 Հայոց լեզու և գրականություն - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված գիտելիքներ և հմտություններ հայոց լեզվի կառուցվածքին վերաբերող այն թեմաների շուրջ, որոնք պարտադիր են բուհական ծրագրով և կիսան են ուսանողների ինքնուրույնությունը, կնպաստեն ստեղծագործական ունակությունների և խոսքի մշակույթի զարգացմանը: Դասընթացի նպատակն է նաև ուսանողներին ,Հայ գրականությունն առարկային վերաբերող գիտելիքներ հաղորդել, խորացնել և ընդլայնել հայ գրականության մասին ուսանողների ունեցած ընդհանուր գիտելիքները, ծանոթացնել հայ գրականության պատմությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կատարել տեքստի հնչյունաբանական և բառակազմական քննություն,
2. կկարողանա խոսքում կիրառել իր ձեռք բերած տեսական գիտելիքները.
3. կկարողանա ճիշտ շարադրել առանձին գործնական գրություններ,
4. կունենա համակողմանի գիտելիքներ հայ հին և միջբաղարյան գրականության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայերենի ծագումը և զարգացման փուլերը: Թեմա 2. Ժամանակակից հայերենի հնչյունական համակարգը: Հնչյունափոխություն. տեսակները: Թեմա 3. Բառագիտություն. առարկան, ենթաբաժինները և խնդիրները: Ձևույթ: Բառերի տեսակներն ըստ կազմության: Թեմա 4. Բարդ բառերի տեսակները: Թեմա 5. Բառիմաստի տեսակները: Իմաստափոխություն. տեսակները: Թեմա 5. Բառերի ձևաիմաստային խմբերը: Թեմա 6. Ժամանակակից հայերենի բառապաշարը: Թեմա 7. Դարձվածաբանություն: Թեմա 8. Բառարանագրություն: Թեմա 9. Խոսքի մասերի դասակարգումը: Թեմա 10. Գոյականը որպես խոսքի մաս: Գոյականի իմաստային-

քերականական խմբերը: Թեմա 11. Գոյականի քերականական կարգերը: Թեմա 12.
Ածականը որպես խոսքի մաս: Տեսակները: Թեմա 13. Թվականը որպես խոսքի մաս:
Տեսակները: Թեմա 14. Դերանունը որպես խոսքի մաս: Տեսակները: Դերանվանական
հոլովում: Թեմա 15. Մակբայը որպես խոսքի մաս: Տեսակները: Թեմա 16. Կապը որպես
խոսքի մաս: Տեսակները: Թեմա 17. Շաղկապը որպես խոսքի մաս: Տեսակները: Թեմա 18.
Վերաբերականը և ձայնարկությունը որպես խոսքի մասեր: Թեմա 19. 5-րդ դարի հայ
պատմագրությունը: Թեմա 20. հայ հին և միջբաղարյան քնարերգությունը: Թեմա 21.
,Սասնա ծռերե էպոսը: Թեմա 22 Միջնադարյան տաղերգություն, հայրեններ:

Հ/բ0022 Հայոց լեզու և գրականություն - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի այս փուլով կապահովվի ուսանողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների այն պաշարը, որը սահմանված է ՈԱՇ-ով և միտված է համակարգված գիտելիքների, հմտությունների ապահովմանը հայոց լեզվից և հայ գրականությունից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա համակարգված գիտելիքներ և հմտություններ հայոց լեզվի կառուցվածքին վերաբերող այն թեմաների շուրջ, որոնք պարտադիր են բուհական ծրագրով,
2. կկարողանա կատարել ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ,
3. կկարողանա խոսքում կիրառել իր ձեռք բերած տեսական գիտելիքները,
4. կունենա համակողմանի գիտելիքներ հայ նոր և նորագույն, սփյուռքահայ գրականության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բայը որպես խոսքի մաս: Թեմա 2. Բայի կազմությունը: Բայածանցներ և բայահիմքեր: Թեմա 3. Անդեմ բայեր: Թեմա 4. Բայի սեռը: Թեմա 5. Բայի

խոնարհումը: Եղանակի, դեմքի, թվի, ժամանակի քեր. կարգերը: Թեմա 6. Բայի ժամանակաձևերը: Դրական և ժխտական խոնարհում: Թեմա 7. Կրկնաբաղադրյալ ժամանակաձևեր: Թեմա 8. Անկանոն և պակասավոր բայերի խոնարհումը: Թեմա 9. Հարադիր բայերի խոնարհումը: Թեմա 10. Շարահյուսություն. առարկան, ինդիքները, հիմնական հասկացությունները: Թեմա 11. Շարահյուսական կապակցման եղանակները և միջոցները: Թեմա 12. Բառակապակցությունը որպես լեզվական միավոր: Բնութագրումը և դասակարգումը: Թեմա 13. Բառակապակցության տեսակներն ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության: Թեմա 14. Նախադասությունը որպես լեզվական միավոր: Բնութագրումը և դասակարգումը: Թեմա 15. Նախադասության գլխավոր անդամներ: Թեմա 16. Գոյականական անդամի լրացումներ. տեսակները, արտահայտությունը և կետադրությունը: Թեմա 17. Բայական անդամի լրացումներ: Խնդիրներ: Թեմա 18. Բայական անդամի լրացումներ: Պարագաներ: Թեմա 19. Սիակազմ նախադասություն: Թեմա 20. Դերբայական դարձված: Թեմա 21. Բարդ համադասական նախադասություն: Թեմա 22. Բարդ ստորադասական նախադասություն: Թեմա 23. Երկրորդական նախադասության բնույթի որոշման մեթոդները: Թեմա 24. Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք: Թեմա 25. Փոխակերպում: Թեմա 26. Հայ նոր գրականության ընդհանուր նկարագիրը: Թեմա 27. Հ.Թումանյան: Ավ. Իսահակյան: Վ.Տերյան: Ե. Չարենց: Թեմա 28. Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/: Թեմա 29. Սփյուռք - ,Կարոտիե և ,Նահանջիե գրականության ուրվագիծ / Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/:

Փ/բ0478 Փիլիսոփայության հիմնահարցեր (4կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունք)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական

զարգացումների արդի միտումների և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին մասնագիտական պատկերացումների ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները.

2. կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը.

3. կկարողանա վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Փիլիսոփայությունը որպես գիտություն: Թեմա 2. Փիլիսոփայության զարգացման պատմական փուլերը: Թեմա 3. Մատերիա և կեցություն: Թեմա 4. Հոգևորի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: Թեմա 5. Զարգացման հիմնախնդիրը: Թեմա 6. Իմացության տեսություն: Թեմա 7. Գիտական իմացության յուրահատկությունը: Թեմա 8. Սոցիալական փիլիսոփայություն: Թեմա 9. Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: Թեմա 10. Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 11. Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: Թեմա 12. Հասարակական գիտակցություն: Թեմա 13. Արժեքաբանության փիլիսոփայություն:

ՄՏԴ/բ0876 Մարմնակրթություն (1-4-րդ կիսամյակներ)³ (32-ական ժամ)

Կամրնտրական դասընթացներ

Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

³ Առարկայի համար կրեդիտներ չեն սահմանվում:

ՕԼ0671 Օտար լեզու (Անգլերեն) -1

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.
2. կտվորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.
3. ձեռք կբերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Թեմա 4. Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը և այլն:

ՕԼ0671 Օտար լեզու (Ֆրանսերեն) - 1

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ,

ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները. դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կկարողանա ընթերցել ադապտացված տեքստեր, հաղորդակցվել ֆրանսերենով:

Բովանդակությունը

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: Թեմա 2. Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: Թեմա 3. Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: Թեմա 4. Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Իգական սեռի և հոգնակի թվի կազմությունը: Թեմա 5 Թվական անուն : Թեմա 6. Հարցական ու Ժխտական նախադասությունների կազմությունը: Թեմա 7 Ֆրանսերենի առավել գործածական նախդիրներն ու շաղկապները:

ՕԼ0671 Օտար լեզու (Գերմաներեն) – 1

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել դպրոցում ձեռք բերած գիտելիքները գերմաներեն ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել

այդ բառապաշարը համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրության նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջորդ ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին

Բովանդակությունը.

Թեմա 1. Եղանակավորող բայեր, սուբյեկտային և օբյեկտային բայեր: Թեմա 2. Ածական անուն. Թեմա 3. Հոմանիշ և հականիշ բայեր: Ամենատարածված ասացվածքները գերմաներեն և հայերեն լեզուներով: Բառի բազմիմաստությունը. Թեմա 4. Ազատ թեմաների ինքնուրույն կազմում “Այսօր իմ ծննդյան օրն է”, “Իմ մասնագիտությունը”, “Գերմանիայի քաղաքները”, մի շարք բանաստեղծություններ Հ. Հայնեի, Վ. Գյոթեի ստեղծագործություններից:

Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգաք

ՕԼ0672 Օտար լեզու (Անգլերեն) - 2

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.

2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.

3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանողական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

OL0672 Օտար լեզու (Ֆրանսերեն) 2

Նպատակը.

Խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերեն լեզվի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային պարզ հմտություններ, գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

* կկարողանա ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,

* կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը,

* կկարողանա գրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերը: Թեմա 2. 3-րդ խմբի հիմնական անկանոն բայերը: Թեմա 3. Հրամայական եղանակի կազմությունը: Թեմա 4. Դերանվանական բայեր: Թեմա 5. Ածական անուն, համեմատության աստիճանների կազմությունը: Թեմա 6. Դերանվանական ածականներ /ստացական, ցուցական,, անորոշ Թեմա 7. Ֆրանսերենի բառակազմական միջոցները: Գործածական նախածանցներն ու վերջածանցները:

ՕԼ0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 2

Նպատակը.

Հարստացնել ուսանողների գիտելիքները բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակով և ուսանողների բառապաշարային և քերականական գիտելիքները հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան արտահայտել իրենց մտքերը, առօրյա խոսակցական թեմաներով, ինչպես նաև կատարեն ազատ թարգմանություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա ունկնդրելով ճիշտ հասկանալ բանավոր խոսքը
2. կկարողանա գրել փոխադրություն
3. կկատարի համապատասխան թարգմանություն գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Բովանդակություն.

Թեմա 1. Գոյականների հոլովման համակարգը և հոլովների կիրառական նշանակությունը: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Թեմա 3. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է “Ես ուսանող եմ”,

“Մուրճի սեղանի շուրջը” (վարվելաձևը սեղանի շուրջը), “Գրադարանում”, “Տարվա եղանակները”, “Իմ սիրելի գրողը”, “Հայաստանի պատմությունից”, “Գնումներ խանութում”, “Ընկերական շրջապատում” և այլն:

Կամրնտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

OL0672 Օտար լեզու (Անգլերեն) - 3

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հիմնարար գիտելիքներով անգլերեն լեզվի քերականության ձևաբանության և շարահյուսության բաժինների և բանավոր խոսքի հիմունքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.

2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.

3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը

Թեմա 1 – Մակբայների համեմատության աստիճանը, Աժականների համեմատության աստիճանը: Թեմա 2 - Անգլերեն լեզվի ժամանակաձևերի ուսումնասիրություն, Ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևեր: Թեմա 3 - Միացյալ թագավորություն, աշխարհագրական բառապաշար, լրացուցիչ տեղեկություններ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության մասին: Թեմա 4 - Հողերի կիրառությունը հատուկ անունների հետ, գոյականական ածանցներ:

OL0673 Օտար լեզու (Ֆրանսերեն) 3

Նպատակը.

Ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ֆրանսերենի բառապաշարի և քերականության վերաբերյալ ունեցած գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ընդհանուր հաղորդակցական նշանակության տեքստեր.
2. կկարողանա ֆրանսերեն լեզվով հաղորդակցվել լառօրյա թեմաների շուրջ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սահմանական եղանակի հիմնական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունն ու գործածությունը: Թեմա 2. Ժամանակների համաձայնեցումը: Թեմա 3.: Անդեմ բայեր ու արտահայտություններ : Թեմա 4. Դերանունների հիմնական տեսակները (ստացական, ցուցական, անորոշ, հարաբերական), դրանց քերականական կարգերի բնութագիրը: Թեմա 5. Մակբայների տեսակներն ու քերականական կարգերը:

ՕԼ0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 3

Նպատակը.

Զարգացնել ուսանողների գիտելիքները լեզվի կառուցվածքի, առանձնահատկությունների, խոսքամասային ձևերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կառուցել հստակ ու սահուն խոսք՝ ճիշտ կիրառելով գերմաներեն լեզվի ժամանակաձևերը
2. կկարողանա գրել շարադրություն
3. կկատարի համեմատաբար բարդ թարգմանություններ գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Բովանդակություն

Թեմա 1- Շեշտադրություն, ուղղագրություն, բառեր և քերականություն

Թեմա 2- Հոդը, գործածությունը, բայ, հրամայական եղանակ, բառեր, շարադասություն:

Թեմա 3- Ֆոնետիկական վարժություններ, օժանդակ բայերի գործածությունը որպես ինքնուրույն բայեր, հարցական նախադաս. շարադասությունը, վարժություններ և տեքստ:

Թեմա 4 - Ընթերցանության օրենքները, գոյական հոլովումը, դերանուն, բառակազմություն, արտասանություն, բառապաշարի ուսուցում: Գրավոր և բանավոր վարժություններ:

Կամրնտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Փ/բ-1238 Մշակութաբանություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանանչելու, վերլուծելու և գնահատելու մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա

- մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները:

Պետք է կարողանա

- ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարբերի փոխներթափանցումները
- ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները
- ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները
- մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում
- ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ տիպի)

Պետք է տիրապետի

մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները: Թեմա 2. Մշակույթի բնորոշումը: Թեմա 3. Մշակույթի գործառույթները: Թեմա 4. Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ: Թեմա 5. Չանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 6. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Թեմա 7. Բնություն և մշակույթ: Թեմա 8. Հասարակություն և մշակույթ: Թեմա 9. Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները:

Փ/բ-0475 Տրամաբանություն

Նպատակը.

Դասընթացի նպատակը մտածողության օրենքների և օրինաչափությունների, մտքի քերականության կանոնների յուրացումն ու ճիշտ օգտագործման շնորհիվ, գիտելիքների միջոցով նոր գիտելիքների, այլև ստանալն ու յուրացնելն է ոչ միայն մտածողության, այլև դրա շնորհիվ իրականության մասին ընդհանրապես: Այս իմաստով անհրաժեշտ է և պարտադիր:

Տրամաբանություն գիտության նպատակն է ցույց տալ, թե ինչպես շաղկապել մտքերը, որպեսզի ճշմարիտ նախադրյալներից ստանանք ճշմարիտ եզրակացություն: Փաստորեն տրամաբանությունը մտքի քերականությունն է: Ահա թե ինչու դպրոցում և բուհում դասավանդվող առարկաների դասավանդման և յուրացման մակարդակը պայմանավորված է դասավանդողի տրամաբանական պատրաստվածությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է կարողանա տիրապետել տրամաբանության օրենքների, կատեգորիալ ապարատի և մեթոդների կիրառման շնորհիվ նյութականի իդեալականացման, օբյեկտիվը սուբյեկտիվացնելու և սուբյեկտիվն էլ օբյեկտիվացնելու հիմնական սկզբունքներին:

Պետք է իմանա տվյալ գիտության օրենքները, կատեգորիալ ապարատը և մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տրամաբանությունը որպես գիտություն: Թեմա 2. Հասկացությունը որպես մտքի ձև: Թեմա 3. Դատողությունը որպես մտքի ձև: Թեմա 4. Տրամաբանության օրենքները և մեթոդները: Թեմա 5. Մտահանգում: Անհրաժեշտ և ճշմարտանման մտահանգումներ: Թեմա 6. Ապացուցում և հերքում:

Հ/բ-0304 Սոցիոլոգիա

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիոլոգիան իբրև գիտություն

1. Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները:

2. Սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքը:

3. Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը, առարկան, մեթոդները, ֆունկցիաները:

4. Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:

5.Սոցիոլոգիան հասարակական գիտությունների համակարգում:

Թեմա 2. Հասարակություն

- 1.Հասարակության պատմական ձևեր և տիպաբանական հիմքեր:
- 2.Հասարակության զարգացումը մեկնաբանող մոտեցումներ:
- 2.1.Հասարակությունն իբրև համակարգ:

Թեմա 3. Մշակույթ

- 1.<<Մշակույթ>> հասկացությունը, տարրերը, տեսակները:
- 2.Սոցիոմշակութային փոփոխություններ:

Թեմա 4. Սոցիալականացում

1. Ընդհանուր հասկացություն, տեսակներ:
2. Առաջնային սոցիալականացումը մեկնաբանող մոտեցումներ:
3. Սոցիալականացման հիմնական ազենտները:
4. Շեղվող վարք:

Թեմա 5. Հասարակության սոցիալական կառուցվածքը

1. Սոցիալական խմբեր և կազմակերպություններ:
2. Սոցիալական ինստիտուտներ. ընտանիքի ինստիտուտը:

Թեմա 6. Սոցիալական ստրատիֆիկացիա

1. Սոցիալական անհավասարություն, սոցիալական մոբիլություն, ստրատիֆիկացիոն դիրքեր, միջին դաս:
2. Ստրատիֆիկացիոն համակարգեր:
3. Սոցիալական ստրատիֆիկացիան մեկնաբանող դասական մոտեցումներ:
Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա

1.Տեսական գիտելիքներ

- ✓ Սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, ֆունկցիաների, հիմնական խնդիրների, սոցիոլոգիական գիտելիքի բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ,
- ✓ Հասարակության պատմական տիպերի, զարգացման օրինաչափությունների, հիմնական ընդհանրությունների եւ տարբերությունների, համակարգային մոտեցման, հասարակության՝ իբրև համակարգի՝ բազմամակարդակ կառուցվածքում գործառնող եւ փոխկախված տարրերի (անհատը՝ սոցիալական գործողություն կատարելու տեսանկյունից, խմբեր, կազմակերպություններ, ինստիտուտներ) վերաբերյալ,
- ✓ Հասարակության վերահսկողության մեխանիզմների, դրանց փոխազդանաձևավորվածության վերաբերյալ,

- ✓ Հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքի(շերտավորման), այն մեկնաբանող մոտեցումների, հիմնական շերտերի բնութագրի, մոբիլության, վերջինիս տեսակների, ըստ մոբիլության «բաց եւ «փակե հասարակությունների մեկնաբանման վերաբերյալ, գլոբալացման, վերջինս մեկնաբանող մոտեցումների եւ հիմնական տեսությունների (*իմպերիալիզմ (Հոբսոն), կախվածության տեսություն (Ֆրանկ), համաշխարհային համակարգի տեսություն (Վալերշտայն), ցանցային տեսություն (Կաստելս)),* հոռմեական ակումբի, գլոբալ եւ գլոբալացնող ռիսկերի, ռիսկի հասարակության գաղափարի, գլոբալացման հիմնական գործիքների, աշխատուժի, տեխնոլոգիաների, կապիտալի հոսքերի, Մալթուսականության, Համահնչունայնացման խնդրի, համաշխարհային հասարակության աճող բարդացման վերաբերյալ:
- ✓ Կիրառական սոցիոլոգիայի զարգացման պատմության, սոցիոլոգիական հետազոտության նախապատրաստման, անցկացման մշակման, ընդհանրացման ձևերի, հետազոտության հիմնական մեթոդների վերաբերյալ:

Բուն մասնագիտական գործնական կարողություններ

- ✓ Վերլուծելու, սինթեզելու,
- ✓ Կազմակերպելու, պլանավորելու,
- ✓ Քննադատության, ինքնաքննադատության,
- ✓ Տեղեկատվության կառավարման,
- ✓ Նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու, մեկնաբանելու
- ✓ Բազմաձևության, բազմամշակութայնության ընդունման,
- ✓ Նոր գաղափարներ առաջադրելու
- ✓ Յուրացված գիտելիքը տրամաբանորեն եւ հետեւողականորեն ներկայացնելու,
- ✓ Առարկայի մեթոդները եւ տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու,
- ✓ Տվյալ առարկայական ոլորտում հետազոտությունների արդյունքները գնահատելու կարողություններ:

Կամրնտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Փ/բ-0479 Իրավագիտություն

Նպատակը.

Իրավագիտությունն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ իրավունքի և պետության ծագման, սոցիալական նորմերի հետ իրավանորմերի հարաբերակցության, պետության ձևի, կառուցվածքի, կառավարման ձևի, իրավունքի համակարգի, իրավահարաբերությունների, իրավունքի տարբեր ճյուղերի, այդ թվում սահմանադրական իրավունքի, ընտանեկան իրավունքի, միջազգային իրավունքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա

- Իրավագիտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Պետության հասկացությունը և էությունը: Իրավական պետությունը և նրա հիմնական բնութագրերը: Պետության տիպերը և ձևերը: Պետության մեխանիզմը: Պետության գործառույթները: Պետությունը հասարակության քաղաքական համակարգում: Իրավունքի հասկացությունն ու էությունը: Իրավունքի ձևերը (աղբյուրները): Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Իրավագիտակցություն: Իրավունքի սկզբունքները և գործառույթները: Իրավունքի նորմ: Նորմատիվ իրավական ակտերը և նրանց համակարգումը: Իրավունքի նորմի մեկնաբանումը: Իրավունքի իրացումը: Իրավական հարաբերություններ: Իրավաչափ վարքագիծ և իրավախախտում: Իրավաբանական պատասխանատվություն: Իրավունքի համակարգը: Օրինականություն և իրավակարգ:

Պետք է կարողանա

- հստակ պատկերացնել պետության և իրավունքի ծագման ընդհանուր օրինաչափությունները գործառույթները
- ինքնուրույն կողմնորոշվել տարբեր տեսակետներում
- որոշ տեսական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ

Պետք է տիրապետի

- իրավագիտության կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
- բուհում իրավագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին
- բուն մասնագիտական գործնական կարողությունների
- գնահատման գործիքներ կիրառելու հմտությանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Պետության և իրավունքի առաջացումը: Թեմա 2. Պետության էությունը, գործառույթները և ձևերը: Թեմա 3. Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Թեմա 4. Սոցիալական նորմերի հասկացությունը և տեսակները: Թեմա 5. Իրավունքը և իրավագիտակցությունը: Թեմա 6. Օրինականությունը և իրավակարգը: Թեմա 7. Իրավունքի համակարգը: Թեմա 8. Իրավական պետություն: Թեմա 9. Սահմանադրական իրավունք: Թեմա 10. Սահմանադրական կարգ հասկացությունը:

S/ք1255 Տնտեսագիտություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին.
2. կիմանա տնտեսագիտական գիտելիքների դերն ու գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում.
3. կկարողանա ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունները.
4. կիմանա առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Թեմա 2. Ապրանքային արտադրություն: Ապրանք և փող: Թեմա 3. Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Թեմա 4. Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: Թեմա 5. Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Թեմա 6. Ձեռնարկատիրական կապիտալի

ձևավորումը: Թեմա 7. Ծախքերի տեսությունը: Արտադրություն և ծախքեր: Թեմա 8. Շահույթ և շահութաբերություն: Ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: Թեմա 9. Ագրո-արդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Թեմա 10. Կուտակում, սպառում և խնայողություն: Թեմա 11. Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Թեմա 12. Ինֆլյացիա և գործազրկություն: Թեմա 13. Դրամավարկային համակարգի էությունը: Բանկեր: Թեմա 14. Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Թեմա 15. Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Թեմա 16. Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

Փ/բ-0476 Քաղաքագիտություն

Նպատակը.

- Ուսանողին տալ գիտելիքներ քաղաքականության, նրա էության, քաղաքական համակարգի, պետության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:
- Խորացնել և ընդլայնել գիտելիքները քաղաքական սուբյեկտների նրանց գործառույթների վերաբերյալ:
- Նախապատրաստել ուսանողին քաղաքականության մեջ տեսականորեն որոշ հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա քաղաքագիտության ուսումնասիրման օբյեկտը, կատեգորիալ համակարգը, հետազոտության մեթոդները, քաղաքագիտության ֆունկցիաները, քաղաքագիտության և հասարակական մյուս գիտությունների կապը, համաշխարհային քաղաքական մտքի պարբերացման սկզբունքները:

Կկարողանա հստակորեն պատկերացում կազմելու քաղաքականության, նրա էության ու կառուցվածքի վերաբերյալ, կատարել վերլուծություններ, համեմատություններ քաղաքագիտության բոլոր հարցերի վերաբերյալ, նորացնել և

փոխանցել մասնագիտական գիտելիքը, նոր գաղափարներ առաջ քաշի, աշխատի թիմում:

Կտիրապետի քաղաքագիտությունն առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին, Բուհում հասարակագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին, Գնահատման գործիքների կիրառելու հմտությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները: Թեմա 2 Քաղաքականության սուբյեկտի էությունը և ձևերը: Թեմա 3. Հասարակության իրավաքաղաքական համակարգը, նրա տիպերը: Թեմա 4. Պետություն, նրա տիպերը և ձևերը: Թեմա 5. Քաղաքական իշխանություն: Թեմա 6. Հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 8. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Թեմա 9. Քաղաքական մշակույթ, ձևերը և ֆունկցիաները: Թեմա 10. Մարդու դերը քաղաքականության մեջ:

II Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ
ԻՏՄՄ/բ-1366 Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և աշխատանքի հիմնական սկզբունքներին: Ուսանողի մոտ ձևավորել համակարգչից օգտվելու հիմնական հմտությունները: Ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները.

2. կլիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները.

3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Գաղափար ինֆորմացիայի մասին: Ինֆորմացիայի չափի միավորները: Թեմա 2. Հաշվողական տեխնիկայի էվոլյուցիան: Պրոցեսոր: Թեմա 3. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Թեմա 4. Ներքին և արտաքին հիշողություն: Թեմա 5. MS Office ծրագրային համակարգը (MS Word, Excel ծրագրեր):

ԸՏՂ/բ-0875Քաղապաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն և 14 ժամ գործնական պարապմունք)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացների նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնել պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1. ԱԻ-ի նախարարության կառուցվածքը և խնդիրները: Թեմա 2. ԱԻ-ները, նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկչությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության կազմակերպումը ԱԻ-ների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

ԲԱ/բ-0913Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել բնապահպանական աշխարհայացք՝ ուսանողներին ծանոթացնելով բնապահպանություն գիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորման, գործունեության հիմունքներին, բնություն-հասարակություն համակարգում բնապահպանության հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիրառնա բնապահպանության՝ որպես գիտության ձևավորման, կենդանիների և բույսերի էկոլոգիայի, էկոհամակարգի, կենսացենոզի և

նոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին.

2. կհասկանա բնական և անթրոպոգեն էկոհամակարգերի զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները.

3. կկարողանա վերլուծել էկոլոգիական վիճակը և գալ համապատասխան եզրակացությունների, կատարել ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական անալիզներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բնապահպանությունը և նրա կայացման պատմությունը: Թեմա 2. Օրգանիզմի և միջավայրի միջև փոխազդեցությունները: Թեմա 3. Պոպուլյացիաների էկոլոգիա: Թեմա 4. Համակեցություններ: Թեմա 5. Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: Թեմա 6. Կենսոլորտ: Թեմա 7. Կենսոլորտի էվոլյուցիայի հիմնական ուղղությունները: Թեմա 8. Կենսոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցությունները: Թեմա 9. Անթրոպոգեն ազդեցությունները մթնոլորտի և կլիմայի վրա: Թեմա 10. Անթրոպոգեն ազդեցությունները ջրոլորտի վրա: Թեմա 11. Անթրոպոգեն ազդեցությունները լիթոսֆերայի վրա: Թեմա 12. Անթրոպոգեն ազդեցությունները համակեցությունների վրա: Թեմա 13. Կենսոլորտի վրա ազդեցության հատուկ ձևեր: Թեմա 14. Բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքները: Թեմա 15. Էկոլոգիան և մարդու առողջությունը: Թեմա 16. Էկոլոգիա և տնտեսագիտություն: Թեմա 17. Բնության պահպանություն և գլոբալիզացիա:

Կամրնտրական դասընթաց

Կամրնտրական դասընթաց (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական աշխատանք)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում

Նպատակը.

1. Անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին և մինչբժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ

2. Տուժածի վիճակի վերահսկում
- 3 . Տուժվածի և հիվանդի խնամքի կանոնների յուրացում

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է հմանա.

- Հիվանդությունների առաջացման պատճառները և կանխարգելիչ միջոցառումները
- Արտակարգ իրավիճակներում կողմնորոշված և ճիշտ բուժօգնություն կազմակերպելու կանոնները
- Առողջ ապրելակերպի կանոնները

պետք է կարողանա.

- ✓ Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում:
- ✓ Տիրապետի առաջին օգնության կազմակերպման կանոններին
- ✓ Կատարել ստամոքսի լվացում, վիրակապում, բեկակալների տեղադրում, հոգնա,
- ✓ Ջերմաչափում, պուլսի որոշում, զ/ճ չափում
- ✓ Այրվածքի մակերեսի և խորության որոշում
- ✓ Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժվածի մոտ
- ✓ Լարանի ճիշտ տեղադրում

պետք է տիրապետի.

- ✓ Կարողանա գիտական հարցերի վերբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ
- ✓ Տիրապետի Առողջ ապրելակերպի կանոններին
- ✓ Տիրապետի արտակարգ իրավիճակներում և կենցաղում ճիշտ , գրագետ , արագ բուժօգնություն կազմակերպելու կանոններին
- ✓ Տիրապետի հիգիենայի կանոններին
- ✓ Տիրապետի հիվանդի/ տուժվածի/ խնամքի կանոններին :

Բովանդակություն

Թեմա 1. Օրգանիզմի հիմնական օրգան համակարգերի կառուցվածքը և ֆունկցիան: Հասկացություն հիվանդության մասին: Դեղանյութեր: Դեղանյութերի ներմուծման եղանակները: Մարմնի ջերմության չափում: Պուլսի որոշում: Թեմա 2. Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ, կանխարգելումը: Հիվանդների խնամքը: Արյան շրջանառության վրա ազդող միջոցներ: ՋՃ չափումը: Թեմա 3. Շնչառական համակարգի հիվանդություններ, կանխարգելումը: Հիվանդների խնամքը: Շնչառության հաճախականության որոշումը: Թեմա 4. Մարսողական համակարգի հիվանդություններ, կանխարգելումը: Հիվանդների խնամքը:

Ստամոքսի լվացում: Հոգնա: Թեմա 5. Միզասեռական համակարգի հիվանդություններ, կանխարգելումը: Հիվանդների խնամքը: Թեմա 6. Կենցաղային թունավորումներ: Առաջին բուժօգնության կազմակերպումը: Թեմա 7. Վնասվածքներ: Այրվածքներ: Ջերմային խանգարումներ: Ջրահեղձում: Առաջին բուժօգնության կազմակերպումը: Թեմա 8. Արյունահոսություններ: Դաղարեցման եղանակները: Ռեզուս գործոն, արյան խմբեր: Թեմա 9. Վերքային ինֆեկցիա: Ինֆեկցիոն հիվանդություններ: Հականեխություն և աննեխություն: Վիրակապություններ: Թեմա 10. Գլինիկական մահ: Վերակենդանացման միջոցառումներ: Հասկացություն վնասվածքային շոկի մասին: ՄԻԱՎ_ՁԻԱՀ: Տուբերկուլոզ: Առողջ ապրելակերպի կանոնները :

Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն

Նպատակը.

Անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին և մինչբժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ

2. Տուժածի վիճակի վերահսկում
3. Տուժվածի և հիվանդի խնամքի կանոնների յուրացում

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա.

- Տուժածի վիճակը վերահսկելու կանոնները
- Հիվանդությունների առաջացման պատճառները և կանխարգելիչ միջոցառումները
- Արտակարգ իրավիճակներում կողմնորոշված և ճիշտ բուժօգնություն կազմակերպելու կանոնները

պետք է կարողանա.

- ✓ Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում:
- ✓ Տիրապետի առաջին օգնության կազմակերպման կանոններին
- ✓ Կատարել վիրակապում, լարանի տեղադրում, բեկակալների տեղադրում
- ✓ Կատարել ստամոքսի լվացում, հոգնա,
- ✓ Ջերմաչափում, պուլսի որոշում, զ/ճ չափում
- ✓ Այրվածքի մակերեսի և խորության որոշում
- ✓ Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժվածի մոտ

Տուժածի տեղափոխում

պետք է տիրապետի.

- ✓ Կարողանա գիտական հարցերի վերբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ
- ✓ Տիրապետի Առողջ ապրելակերպի կանոններին
- ✓ Տիրապետի արտակարգ իրավիճակներում և կենցաղում ճիշտ , գրագետ , արագ բուժօգնություն կազմակերպելու կանոններին
- ✓ Տիրապետի հիգիենայի պահպանման կանոններին

- ✓ Տիրապետի տուժվածի խնամքի կանոններին

Բովանդակություն.

Թեմա 1. Հասկացություն հիվանդության մասին: Հիվանդի քննության մեթոդները:
Թեմա 2. Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ: Թեմա 3. Շնչառական համակարգի հիվանդություններ: Թեմա 4. Մարսողական համակարգի հիվանդություններ: Թեմա 5. Թունավորումներ: Թեմա 6. Վնասվածքներ: Թեմա 7. Ջերմային խանգարումներ: Թեմա 8. Արյունահոսություն: Թեմա 9. Վիրակապություններ: Վերակենդանացման միջոցառումներ: Թեմա 10. Առողջ ապրելակերպի կանոնները: Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ: Ինֆեկցիոն հիվանդություններ:

III Ընդհանուր մասնագիտական առարկաներ

Ու/բ-0064 Ժամանակակից ռուսաց լեզվի սրբակոչկում - 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (48 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ուղղագրությունից և կետադրությունից ունեցած գիտելիքները, ուշադրություն դարձնել ուղղախոսական խնդիրներին, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ, խթանել ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, ապահովել գործնական գրություններ գրելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ուղղագրությունից և կետադրությունից ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում՝ տալով համապատասխան լեզվաբանական հիմնավորումներ.
2. կկարողանա կազմել գրագետ տեքստ.

3. կկարողանա գրել գործնական գրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գրավոր և բանավոր խոսքի զարգացում: Թեմա 2. Հնչյունաբանություն գործառական հայեցակետերը: Թեմա 3. Ժամանակակից ռուսաց լեզվի ուղղախոսության հիմնական կանոնները: Թեմա 4. Շեշտի իմաստատարբերակիչ դերը: Թեմա 5. Հնչերանգ: Տեքստի երանգավորումը ընթերցանության ժամանակ: Արտահայտիչ ընթերցանություն: Խոսքի իմաստի կախվածությունը հնչերանգից և կետադրությունից: Թեմա 6. Բառի իմաստաբանական և շարահյուսական գործառույթների համապատասխանությունը: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Թեմա 7. Հոմանիշների, հականիշների, նույնանուն և բազմիմաստ բառերի գործածությունը խոսքում: Դարձվածքների գործածությունը: Թեմա 8. Բառային մինիմումի ձևավորումը մասնագիտական լեզվի ոլորտում: Լեզվաբանական և գրականագիտական տերմինաբանություն: Թեմա 9. Բառակազմության տեսակները:

Ու/բ-0064 Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (48 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ուղղագրությունից և կետադրությունից ունեցած գիտելիքները, ուշադրություն դարձնել ուղղախոսական խնդիրներին, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ, խթանել ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, ապահովել գործնական գրություններ գրելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ուղղագրությունից և կետադրությունից ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում՝ տալով համապատասխան լեզվաբանական հիմնավորումներ.
2. կկարողանա կազմել գրագետ տեքստ.
3. կկարողանա գրել գործնական գրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Անուն խոսքի մասերի սեռը և թիվը: Թեմա 2. Ածական դերբայ և մակբայական դերբայ: Թեմա 3. Սուբյեկտի արտահայտման միջոցները: Թեմա 4. Պարզ և բարդ, միակազմ և երկկազմ նախադասությունների փոխակերպումը, դարձվածների փոխակերպումը ստորադասական նախադասությունների: Թեմա 5. Ուղղակի և անուղղակի խոսք: Մեջբերում: Թեմա 6. Տեքստը որպես շարահյուսական բարդ ամբողջություն: Թեմա 7. Խոսքի գործառական ոճերը: Թեմա 8. Գեղարվեստական տեքստի լեզվաբանական վերլուծություն: Թեմա 9. Ուղղագրություն և կետադրություն: Թեմա 10. Ռուսերենի կետադրության կանոնները:

Ու/բ-0064 Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 3 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (48 ժամ գործնական պարապմունք)
3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է վերամշակել ուսանողների արտահայտիչ խոսքը և տեխնիկան, գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով հղկել արտահայտիչ խոսքը, ծանոթացնել խոսքի տեմպին, ռիթմին, առոգանության և տրամաբանական շեշտերին, այս ոլորտում ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում.
2. կտիրապետի խոսքի կուլտուրայի ուսումնասիրման մեթոդներին.
3. կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խոսքի մշակույթ և տեխնիկա. համառոտ ակնարկ: Թեմա 2. Խոսքի մշակույթի հիմնական տարրերը՝ ճշտություն, դիպուկություն, տրամաբանվածություն, մաքրություն: Թեմա 3. Շնչառություն, տեսակները: Թեմա 4. Առոգանություն, տեսակները: Թեմա 5. Խոսքի տեմպ: Թեմա 6. Չայներանգ: Թեմա 7. Ուղղախոսություն: Թեմա 8. Ռիթմ: Թեմա 9. Խոսքի հարստություն (բազմազանություն): Թեմա 10. Շեշտ: Թեմա 11. Խոսքի պատշաճություն (պատեհություն): Թեմա 12. Խոսքային և լեզվական ոճերը և նրանց հարաբերությունը խոսքի մշակույթի հետ: Թեմա 12. Խոսքի մշակույթը գիտական և ուսուցողական ոլորտներում:

Ու/բ-0060 Լեզվաբանության հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տվյալ դասընթացը նպատակ ունի տալ հիմնարար գիտելիքներ լեզվի ծագման, զարգացման կարգերի մասին հիմնվում է Ֆ. դե Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության կուրսե» - ում ներկայացված հայեցակարգի վրա: Առաջին իսկ դասերից ուսանողները ծանոթանում են լեզվաբանության հիմնարար սկզբունքներին՝ լեզու, խոսք, միաժամանակություն, տարժամանակություն, արտաքին և ներքին լեզվաբանություն և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տվյալ գիտության հիմնարար դրույթները, նրա կայացման հիմնական փուլերը, լեզվաբանության պատմությունը.
2. պատկերացում կունենա որոշ մասնավոր, լեզվի ամենաարդիական հարցերի, օրինակ, հնարավորությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Լեզվաբանությունը որպես գիտություն: Լեզվաբանության հիմնական բաժինները: Լեզվաբանության կապը այլ գիտությունների հետ: Լեզվաբանությունը և փիլիսոփայությունը: Թեմա 2. Լեզվաբանության ծագումը: Լեզվաբանությունը Հին Հնդկաստանում և Հին Չինաստանում: Թեմա 3. Հին Հունական և Հռոմեական լեզվաբանությունը: Արիստոտելի ուսմունքը: Քերականագետների դպրոցը Ալեքսանդրիայում: Թեմա 4. Լեզվաբանական արաբական ավանդությունը: Թեմա 5. Լեզվաբանությունը 19-րդ դարում: Ժամանակակից լեզվաբանական դպրոցները: Թեմա 6. Լեզուն և հաղորդակցման այլ միջոցները: Լեզվի հիմնական գործառույթները: Լեզու և խոսք: Թեմա 7. Լեզվաբանական մեթոդներ: Լեզու և մտածողություն: Լեզվի նշանային բնույթը: Թեմա 8. Արհեստական լեզուներ: Լեզվի ծագման հիմնական տեսությունները: Թեմա 9. Լեզվական միություններ և լեզվական ընտանիքներ: Թեմա 10. Գրի զարգացման հիմնական փուլերը: Սլավոնական այբուբենը՝ կիրիլիցա, գլագոլիցա: Թեմա 11. Լեզուների դասակարգման սկզբունքները : Թեմա 12. Լեզուների ծագումնաբանական դասակարգումը: Հնդեվրոպական լեզվական ընտանիք: Թեմա 13. Գրական լեզու և գրական նորմա: Միջազգային լեզուներ: Թեմա 14. Հնչյունաբանություն: Հնչյունների դասակարգման սկզբունքները: Չայնավորներ և բաղաձայններ: Թեմա 15. Վանկ, շեշտ, հնչերանգ, տակտ և այլն: Հնչյունաբանական օրենքները: Թեմա 16. Բառագիտությունը որպես լեզվաբանական գիտություն: Բառագիտության բաժինները: Խոսքը որպես լեզվական միավոր: Բազմիմաստություն: Նույնանուն բառեր: Թեմա 17. Բառիմաստի տեսակները: Թեմա 18. Դարձվածքները և նրա տեսակները: Թեմա 19. Բառապաշարի հարստացման հիմնական ճանապարհները:

Ու/բ-0078 Ընդհանուր լեզվաբանություն 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4,615 ժամ (24 ժամ դասախոսություն, 36 ժամ գործնական պարապմունք)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Բնութագրել ժամանակակից լեզվաբանության հիմնական հրատապ խնդիրները, որոշել լեզվաբանության տեղը ժանակակից գիտական հարացույցում: Ուսանողներին տալ գիտելիքներ ժամանակակից լեզվաբանության առավել

հրատապ հարցերի մասին, լեզվի մասին գիտության խոշոր ներկայացուցիչների ներդրած նյութերի վերլուծության հիման վրա: Ընդհանրացնել ուսանողների գիտելիքները հիմնական տեսական հիմունքների և լեզվաբանության մեթոդների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկողմնորոշվի լեզվաբանության տեսության գրականության մեջ և ինքնուրույն կգտնի իրեն հետաքրքրող և անհրաժեշտ տեղեկություններ լեզվաբանության տեսության մասին:
2. կկարողանա վերլուծել ժամանակակից միտումները և տեսական նորարարությունները պատմական հեռանկարում:
3. կյուրացնի լեզվաբանության կարևորագույն հասկացություններն ու տերմինները,
4. կկարողանա ներթափանցել լեզվի կառուցվածքի մեջ,
5. կկարողանա կիրառել լեզվի ուսումնասիրության հիմնական մեթոդները,
6. կհիմանա աշխարհի լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Թեմա 2. Լեզվի ներքին կառուցվածքը: Լեզուն որպես բազմաստիճան հաղորդակցման համակարգ: Թեմա 3. Հնչյունաբանության հրատապ խնդիրները: Թեմա 4. Ձևաբանության հրատապ խնդիրները: Թեմա 5. Շարահյուսության հրատապ խնդիրները: Թեմա 6. Տեքստի լեզվաբանության հրատապ խնդիրները: Թեմա 7. Լեզվաբանության իմաստաբանության հրատապ խնդիրները: Թեմա 8. Լեզվաբանության տիպաբանության հրատապ խնդիրները: Թեմա 9. Լեզվի գործառնության տեսակետները: Էթնոսի, մշակույթի, հասարակության, ժողովրդի պատմության և այլ լեզուների փոխահարաբերության խնդիրները լեզվի հետ: Թեմա 10. Լեզվաբանության պրագմատիկայի խնդիրները: Թեմա 11. Մտածողության, գիտակցության, իրականության և լեզվի փոխահարաբերության խնդիրները: Թեմա 12. Լեզվի և մարդու հոգեբանաֆիզիոլոգիական կառուցվածքի փոխահարաբերության խնդիրները:

Ու/բ-0061 Հին սլավոներեն -1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2,375 ժամ (10 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգաք

Նպատակը.

Հին սլավոներենի ուսուցումը ոչ միայն լեզվաբանական, այլ նաև պատմամշակութային արժեք ունի, քանզի այդ լեզուն հանդիսանում է բոլոր սլավոներենի ժամերգության և հոգևոր մշակույթի լեզուն: Հին սլավոներենի ուսուցումը անհրաժեշտ է, քանզի այն մեծապես ազդել է գրական ռուսաց լեզվի ձևավորման վրա: Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին սլավոներենի հնչյունական, բառային և քերականական իրողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կիրառել ստացած գիտելիքները գործնականում.
2. կբացատրի ժամանակակից ռուսաց լեզվի լեզվային գործընթացները պատմական զարգացման տեսանկյունից.
3. կհասկանա, կկարդա և կթարգմանի հին սլավոնական գրական հուշարձանների տեքստերը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սլավոներենի առանձնացումը համահնդեվրոպական ընդհանրությունից:

Թեմա 2. Սլավոնական մատենագրության առաջացումը: Սլավոնական այբուբենը: Թեմա

3. Հին սլավոնական մատենագրության հուշարձանները: Սլավոնական մատենագրության հուշարձանները Կիրիլից առաջ: Կիրիլից առաջ եղած սլավոնական մատենագրության առկայության մասին տվյալներ: Թեմա 4. Հին սլավոներենի հնչյունաբանությունը: Ձայնավորների համակարգը: Թեմա 5. Ժամանակակից սլավոնական լեզուներում պահպանված համասլավոնական ձայնավորները: Թեմա 6. Ժամանակակից սլավոնական լեզուներում չպահպանված համասլավոնական ձայնավորները: Թեմա 7. Ուշ համասլավոնական շրջանի ձայնավորների ստեղծումը: Թեմա 8. Համասլավոնական երկբարբառները: Թեմա 9. Քմային ձայնավորների ստեղծումը: Թեմա 10. Բաղաձայնների

համակարգը: Թեմա 11. Նայական բաղաձայնների վերադասավորումը: Թեմա 12. Առաջին քմայնացում՝ փափկացում: Թեմա 13. j – ից առաջ բաղաձայնների փոփոխությունները:

Ու/բ-0061 Հին սլավոներեն - 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (48 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին սլավոներենի բառային և ձևաբանական իրողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կիրառել ստացած գիտելիքները գործնականում.
2. կբացատրի ժամանակակից ռուսաց լեզվի լեզվային գործընթացները պատմական զարգացման տեսանկյունից.
3. կհասկանա, կկարդա և կթարգմանի հին սլավոնական գրական հուշարձանների տեքստերը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հին սլավոներենի ձևաբանությունը: Թեմա 2. Անվանական հոլովման համասլավոնական համակարգը: Համասլավոնական անվանական հիմքեր: Թեմա 3. Ածական անուն: Թեմա 4. Դերանուններ: Թեմա 5. Թվականներ: Թեմա 6. Բայ: Ընդհանուր բնութագիրը: Թեմա 7. Բայի ներկա ժամանակը: Թեմա 8. Բայի ապառնի ժամանակը: Թեմա 9. Բայի անցյալ ժամանակը. անցյալ կատարյալ՝ ասորիտ, անցյալ անկատար՝ իմպերֆեկտ, կատարյալ կերպի ժամանակ՝ պերֆեկտ, վաղակատար ժամանակ՝ պյուսկվամպերֆեկտ: Թեմա 10. Պայմանական եղանակ, հրամայական եղանակ: Թեմա 11. Անորոշ դերբայներ, ապառնի դերբայներ՝ սուպին: Թեմա 12. Ածական դերբայներ: Թեմա 13. Նախդիրներ, շաղկապներ և բառ-մասնիկներ: Թեմա 14. Հին սլավոներենի շարահյուսության կարևորագույն առանձնահատկությունները: Պարզ նախադասություն: Թեմա 15. Ենթակա և ստորոցյալ: Որոշիչ, ինդիր և պարագա: Թեմա 16. Բարդ նախադասություն:

Ու/բ-0065 Ռուսաց լեզվի պատմական քերականություն (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (36 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսումնասիրել լեզվի զարգացման ուղիները, գտնել այդ զարգացման օրինաչափությունները, քննել լեզվի ներքին զարգացման կանոնները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարդա և կթարգմանի հին ռուսերենի գրական հուշարձանների տեքստերը.
2. կպարզաբանի բառերի կառուցվածքային մոդելները, հին ռուսերենի և ժամանակակից ռուսաց լեզվի ընդհանուր բառակազմական տարրերը և բառաիմաստաբանական միանմանությունները.
3. կունենա ավելի ամբողջական գիտելիքներ սլավոնական լեզուների պատմական կապերի վերաբերյալ.
4. կբացատրի լեզվի պատմական զարգացման ինչպես ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ ներքին կանոնները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Պատմական քերականություն. նրա առարկան և խնդիրները: Թեմա 2.

Արևելասլավոնական ցեղերը և նրանց խմբավորումը: Թեմա 3. Հին ռուսական ազգության և հին ռուսերենի ձևավորումը: Թեմա 4. Մատենագրության առաջացումը և զարգացումը արևելյան սլավոնների մոտ: Թեմա 5. Մինչ Ռուսիայի մկրտումը սլավոնների մոտ մատենագրության առկայության մասին տվյալներ: Թեմա 6. Հին ռուսերենի տարալուծումը և վելիկոռուսական լեզվի առաջացումը: Թեմա 7. Ռուս ազգի և ազգային ռուսաց լեզվի ստեղծումը: Թեմա 8. Ռուսաց լեզվի պատմության հիմնական աղբյուրները: Թեմա 9. Ռուս մատենագրության կարևորագույն հուշարձանները: Թեմա 10. Հին ռուսերենի հնչյունաբանական համակարգը: Թեմա 11. Ե, Ե ամփոփված ձայնավորների պատմական զարգացումը: Թեմա 12. Ետնալեզվային բաղաձայնների հերթագայությունը

շչական և սուլական բաղաձայնների հետ: Թեմա 13. Այլ բաղաձայնների հերթագայությունը: Թեմա 14. Ե ձայնավորի փոփոխությունը Օ (Է) ձայնավորի: Թեմա 15. Հին ռուսերենի ձևաբանական կառուցվածքի ընդհանուր բնութագիրը: Թեմա 16. Գոյականների պատմական զարգացումը: Թեմա 17. Դերանունների պատմական զարգացումը: Թեմա 18. Ածականների պատմական զարգացումը: Թեմա 19. Թվականների պատմական զարգացումը: Թեմա 20. Բայի պատմական զարգացումը: Թեմա 21. Շարահյուսություն:

Ու/բ-0062 Ժամանակակից ռուսաց լեզու (Հնչյունաբանություն) (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ պատկերացում ռուսաց լեզվի հնչյունաբանական համակարգի, ձայնավորների և բաղաձայնների համակարգում գոյություն ունեցող հիմնական հնչյունաբանական օրենքների, հնչյունների դասակարգման մասին: Տալ գիտելիքներ ռուսերենի շեշտի, հնչերանգի, վանկի ձևավորման, ինչպես նաև հնչյունադարձության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կունենա հնչյունաբանության մասին կայուն, հստակ գիտելիքներ.
2. ծանոթ կլինի ուղղախոսության նորմերին և օրենքներին.
3. կկատարի հնչյունների հնչյունաբանական վերլուծություն.
4. գործնականում կօգտագործի ստացած գիտելիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ինչ է ուսումնասիրում հնչյունաբանությունը: Հնչյունաբանության դերը լեզվաբանական գիտությունների համակարգում, նրա կապը լեզվաբանական և ոչլեզվաբանական գիտությունների հետ: Թեմա 2. Հնչյունը և տառը: Թեմա 3. Հնչյունների արտասանական դասակարգումը: Թեմա 4. Չայնավոր հնչյունները: Արտասանական դասակարգումը: Թեմա 5. Բաղաձայնների արտասանական դասակարգումը: Թեմա 6.

Ձայնավորների դիրքային փոփոխությունները շեշտի տակ: Թեմա 7. Ձայնավորների փոփոխությունները ոչ շեշտված դիրքում: Թեմա 8. Դիրքային փոփոխություններ և դիրքային փոխարինում: Թեմա 9. Շեշտ: Թեմա 10. Հնչյունական բառե հասկացությունը: Թեմա 11. Շեշտադրման տեսակները: Թեմա 12. Վանկ և նրանց տեսակները: Թեմա 13. Վանկատում: Թեմա 14. Տակտ: Թեմա 15. Ֆրագ: Թեմա 16. Հնչերանգ, հնչերանգային ուրվագիծ հասկացությունը: Թեմա 17. Հնչյունական տառադարձում: Թեմա 18. Ուղղախոսությունը որպես լեզվաբանության հատուկ բաժին: Թեմա 19. Ուղղախոսության հիմնական կանոնները. ձայնավորների և կապակցված բաղաձայնների արտասանությունը:

Ու/բ-0063 Ժամանակակից ռուսաց լեզու (Բառագիտություն) - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ բառագիտական երևույթների վերլուծությունը ոչ միայն տեսական, այլև գործառական տեսանկյունից, կանոնակարգել բառագիտական խմբերի ոճական օգտագործումը խոսքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կստանա հիմնական բառագիտական միավորների մասին գիտելիքներ և ճիշտ կօգտագործի նրանք խոսքում.
2. կունենա անհրաժեշտ տեսական գիտելիքներ բառագիտության դասընթացի հիմնական բաժինների վերաբերյալ.
3. կունենա գիտելիքներ լեզվի ոճական շերտերի վերարտադրությունից
4. կկարողանա ժամանակակից խոսքում ճիշտ օգտագործել այս կամ այն բառագիտական շերտերը և խմբերը, տարանջատել գրական լեզուն և բարբառներից և ժարգոններից
5. կունենա գիտելիքներ ռուսաց լեզվի բառապաշարի կազմավորման վերաբերյալ (փոխառություններ, բուն ռուսական բառեր),

կկարողանա օգտվել տարբեր տիպի (լեզվաբանական, հանրագիտական) բառարաններից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բառագիտության առարկան: Բառագիտության տեղը լեզվաբանական առարկաների համակարգում: Ռուսաց լեզվի բառային ֆոնդի ձևավորման վրա ազդող արտալեզվաբանական գործոնների նշանակությունը: Թեմա 2. Բառը որպես բառագիտության միավոր: Բառի կառուցվածքային հատկանիշները. հնչյունաբանական ձևավորվածություն, բառային ձևավորվածություն և այլն: Բառի՝ գոյություն ունեցող սահմանումները: Թեմա 3. Նշանի երկիմաստություն. բառի բառային և քերականական նշանակությունները: Թեմա 4. Բառիմաստի տիպերը. անվանական, դարձվածքաբանորեն կապված և շարահյուսությամբ պայմանավորված նշանակություն: Թեմա 5. Մենիմաստություն և բազմիմաստություն: Թեմա 6. Բառի ներքին ձևի հասկացությունը, ներքին ձևի նեղացում և ընդլայնում: Թեմա 7. Համանուններ: Համանունների առաջացման պատճառները: Համանունների տեսակները: Համանունների և բազմիմաստ բառերի տարբերակումը: Թեմա 8. Բառաշերտի ոճաբանական տարբերակումը: Հնաբանություններ: Թեմա 9. Բարբառային բառեր, նրանց տեսակները: Նորաբանություններ: Հեղինակային նորակազմություններ: Եզրույթներ և նրանց առաջացումը: Եզրույթների մենիմաստությունը և բազմիմաստությունը: Թեմա 10. Լեզվի համակարգային հարաբերությունները: Հոմանիշներ: Հոմանիշների տեսակները: Թեմա 11. Հականիշներ և նրանց տեսակները: Հականիշների արտահայտման միջոցները: Թեմա 12. Հակադրություն (անտիթեզ, օքսյումորոն): Ժարգոնային բառեր: Ծածկաբանություն (արգոտիզմներ): Թեմա 13. Ժամանակակից ռուսաց լեզվի բառաշերտերը: Բնիկ ռուսական բառաշերտ: Թեմա 14. Հին սլավոնական բառեր, նրանց հատկանիշները: Թեմա 15. Փոխառությունների լեզվական և արտալեզվական պատճառները: Թեմա 16. Փոխառություններ հուներենից, լատիներենից, գերմաներենից, ֆրանսերենից, անգլերենից: Թեմա 17. Համաժողովրդական և ոչ համաժողովրդական բառապաշար: Մասնագիտական բառապաշար: Ակտիվ և պասիվ բառապաշար:

Ու/բ-0066 Ժամանակակից ռուսաց լեզու (Դարձվածաբանություն և բառարանագիտություն) (3 կրեդիտ)

Շաբաթական 2,25 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Տալ դարձվածային միավորների դասակարգումը, ըստ տարբեր մոտեցումների պարզաբանել դարձվածքի կարգային հատկանիշները; ազատ և կապակցված կապակցությունների միջև եղած տարբերությունը, վերլուծել դարձվածքները իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական, ծագումնաբանական համապատասխանության տեսանկյուններից, ուսանողների մոտ մշակել տեղեկատվական գրականությունից և բառարաններից օգտվելու պահանջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. խոսքի մեջ կկարողանա ճիշտ օգտագործել դարձվածքները.
2. կստանա համառոտ տեղեկություններ դարձվածքաբանության ուսումնասիրման պատմությունից.
3. կարողանա բարձրացնել իր խոսքի մշակույթը, ընդլայնել բառամթերքի շրջանակը.
4. կիմանա բառարանի կառուցման սկզբունքները և հիմքերը, բառարանից օգտվելու կանոնները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Դարձվածաբանություն: ,Դարձվածաբանական միավորե հասկացության սահմանումը: Դարձվածքները և բառերը: Թեմա 2. Դարձվածքների և լեզվական մյուս միավորների հարաբերությունները: Դարձվածաբանության ծավալը և սահմանները: Թեմա 3. Լեզվական համակարգում դարձվածքների տեղը: Թեմա 4. Ռուսաց լեզվի դարձվածաբանական հարստությունը: Թեմա 5. 80-ական թթ. ռուսագիտության մեջ ռուսական դարձվածաբանության ուսումնասիրությունը: Թեմա 6. Դարձվածք և բառ: Թեմա 7. Դարձվածք և բառակապակցություն: Թեմա 8. Դարձվածաբանական միավորների համակարգումը: Թեմա 9. Դարձվածքների բառային կազմը: Թեմա 10. Դարձվածքների

ձևավորման հիմնական միջոցները: Թեմա 11. Թևավոր խոսքեր: Թեմա 12. Ռուսաց լեզվի կարևորագույն բառարանները:

Ու/բ-0067 Ժամանակակից ռուսաց լեզու (Ձևաբանություն-1) (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (36 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական պարապմունք)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հաղորդել ուսանողներին Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանության վերաբերյալ համակարգված գիտելիքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի Ժամանակակից ռուսաց լեզվի խոսքիմասային համակարգը համաժամանակյա և տարժամանակյա նկարագրությամբ.
2. կյուրացնի խոսքի մասերի տարբերակման չափանիշները (ընդհանուր իմաստաբանական բնորոշումը, ձևաբանական կարգերի ամբողջությունը, շարահյուսական և հաղորդակցական գործառույթները).
3. կկարողանա յուրացնել ամբողջական գիտելիքներ հիմնական քերականական կարգերի և նրանց արտահայտման ձևերի մասին.
4. կկարողանա յուրացնել ինքնուրույն և լեզվաբանական վերլուծության հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ձևաբանությունը որպես քերականության բաժին: Թեմա 2. Խոսքի մասերի տեսությունը: Գոյական անուն: Թեմա 3. Գոյականների իմաստաքերականական կարգերը: Գոյականների ձևաբանական կարգերը: Թեմա 4. Շնչավոր/անշունչ գոյականներ: Թեմա 5. Սեռի քերականական կարգը: Թեմա 6. Թվի քերականական կարգը: Թեմա 7. Թվով ոչ համահարաբերական գոյականներ singularia tantum և pluralia tantum: Թեմա 8. Հոլովումը որպես գոյականի քերականական կարգ: Թեմա 9. Հոլովների իմաստները և նրանց արտահայտման միջոցները: Թեմա 10. Գոյականների հոլովումը: Հոլովման հիմնական ձևերը:

Թեմա 11. Ածական անուն: Խոսքիմասային իմաստը, ձևաբանական հատկանիշները և շարահյուսական գործառույթները: Թեմա 12. Ածականների իմաստաքերականական կարգերը. որակական, հարաբերական և ստացական: Թեմա 13. Ածականի ձևաբանական կարգերը. ամբողջական և կրճատ ձևեր,, համեմատության աստիճանները, սեռը, թիվը, հոլովը: Թեմա 14. Հոլովվող և չհոլովվող ածականներ: Ածականների հոլովման ձևերը: Ածականների հոլովման առանձնահատկությունները: Թեմա 15. Թվական անուն: Թեմա 16. Թվականի իմաստաքերականական կարգերը: Թեմա 17. Թվականի ձևաբանական կարգերը: Թեմա 18. Թվականի թվի քերականական կարգի առանձնահատկությունները: Թեմա 19. Թվականի հոլովման առանձնահատկությունները: Թեմա 20. Դերանուն: Դերանվան իմաստային առանձնահատկությունները: Թեմա 21. Դերանվան իմաստային կարգերը: Թեմա 22. Դերանվան տարբեր կարգերով պայմանավորված՝ սեռի, թվի և հոլովի քերականական կարգերի արտահայտման առանձնահատկությունները:

ՈՂ/Բ-0067 Ժամանակակից ռուսաց լեզու (Ձևաբանություն - 2) (5 կրեդիտ)

Շաբաթական 4,25 ժամ (32 ժամ դասախոսություն, 36 ժամ գործնական պարապմունք)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հաղորդել ուսանողներին Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանության վերաբերյալ համակարգված գիտելիքներ: Ներկայացնել բայ, մակբայ, շաղկապ, նախդիր, ձայնարկություն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի Ժամանակակից ռուսաց լեզվի խոսքիմասային համակարգը համաժամանակյա և տարժամանակյա նկարագրությամբ.

2. կյուրացնի խոսքի մասերի տարբերակման չափանիշները (ընդհանուր իմաստաբանական բնորոշումը, ձևաբանական կարգերի ամբողջությունը, շարահյուսական և հաղորդակցական գործառույթները)։
3. կկարողանա յուրացնել ամբողջական գիտելիքներ հիմնական քերականական կարգերի և նրանց արտահայտման ձևերի մասին։
4. կկարողանա յուրացնել ինքնուրույն և լեզվաբանական վերլուծության հմտությունները։

Բովանդակությունը.

Թեմա 1. Բայ: Բայի Խոսքիմասային իմաստը, ձևաբանական հատկանիշները և շարահյուսական գործառույթները: Թեմա 2. Բայի երկու հիմքերը: Բայի թեքվող և չթեքվող ձևերը: Թեմա 3. Բայի կերպը: Կերպի բառափոփոխական և բառակազմական կարգի խնդիրը: Թեմա 4. Բայի կերպի կազմության մեթոդները: Երկկերպ և միակերպ բայեր: Թեմա 5. Սեռի քերականական կարգը: Թեմա 6. Սեռի արտացոլումը ժամանակակից քերականական ավանդույթում: Թեմա 7. Եղանակի ձևաբանական կարգը: Ձևաբանական եղանակ և շարահյուսական եղանակավորություն: Թեմա 8. Բայի ժամանակի քերականական կարգը: Ժամանակը որպես բառափոփոխական կարգ: Ժամանակաձևերի հիմնական իմաստները: Թեմա 9. Դեմքի քերականական կարգը որպես բայական բառափոփոխական կարգ: Թեմա 10. Դեմք – ժամանակ - եղանակ հարաբերակցությունը: Թեմա 11. Ածական դերբայը որպես բայի ,հիբրիդե՝ բայաանվանական խառնուրդից առաջացած տեսակ, ներառող բայական և անվանական հատկանիշներ: Ածական դերբայական ձևերի կազմության միջոցները: Թեմա 12. Մակբայական դերբայը որպես բայամակբայական ,հիբրիդե՝ տեսակ: Մակբայական դերբայի բայական և մակբայական քերականական հատկանիշները: Մակբայական դերբայների առաջացման կանոնները: Թեմա 13. Մակբայ: Խոսքիմասային իմաստը, ձևաբանական հատկանիշները և շարահյուսական գործառույթները: Մակբայների իմաստաքերականական կարգերը: Թեմա 14 Մակբայների անփոփոխականությունը և համեմատականության աստիճանի առկայությունը, համեմատական և գերադրական աստիճանի կազմության կանոնները: Թեմա 15. Վիճակի

քերականական կարգը: Վիճակի կարգի բառերի՝ որպես հատուկ քերականական դասի բառեր առանձնացնելու հիմքերը: Թեմա 16. Սողալ բառերը որպես հատուկ քերականական դաս: Ավանդական և ժամանակակից հայեցակետեր: Սողալ բառերի իմաստաքերականական կարգերը: Թեմա 17. Սպասարկու բառեր, նրանց քերականական բնույթը: Թեմա 18. Նախդիր: Նախդիրների ձևաբանական հատկանիշները, արտահայտած իմաստները: Ածանցական/ոչ ածանցական նախդիրներ: Թեմա 19. Շաղկապ: Համադասական և ստորադասական շաղկապներ: Շաղկապների ձևաբանական բնութագիրը և շարահյուսական գործառույթները: Թեմա 20. Չայնարկություն, կարգերը:

Ու/բ-0071 Ժամանակակից ռուսաց լեզու (Շարահյուսություն-1) (5 կրեդիտ)

Շաբաթական 4,25 ժամ (32 ժամ դասախոսություն, 36 ժամ գործնական պարապմունք)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հաղորդել ուսանողներին Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսության վերաբերյալ համակարգված գիտելիքներ: Ներկայացնել ժամանակակից ռուսերենի շարահյուսական համակարգն իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության հատկանիշները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մասնագիտորեն ըմբռնել ռուսաց լեզվի շարահյուսական համակարգը.
2. կկարողանա յուրացնել շարահյուսական միավորների՝ բառակապակցության, պարզ և բարդ նախադասության մեկնության հիմնական դրույթները.
3. կկարողանա յուրացնել բառակապակցությունների և նախադասությունների շարահյուսական վերլուծության գործնական հմտությունները.

4. կատանա գիտելիքներ նախադասության հաղորդակցական, շարահյուսական և ձևական հատկանիշների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Շարահյուսական հիմնական միավորները. բառակապակցություն և նախադասություն: Թեմա 2. Բառի շարահյուսական ձևը որպես շարահյուսության առաջնային միավոր: Թեմա 3. Բառակապակցությունը որպես անստորոգում կապակցություն ստորադասական կապի հիման վրա: Թեմա 4. Բառակապակցությունների տեսակները՝ կախված գերադաս անդամի բնույթից: Թեմա 5. Ստորադասական կապակցության տեսակները. համաձայնություն, խնդրառություն և առդրություն: Թեմա 6. Բառակապակցության միավորների միջև իմաստային հարաբերությունների տեսակները: Թեմա 7. Նախադասությունը որպես շարահյուսության հիմնական միավոր: Թեմա 8. Ստորոգման քերականական կարգը որպես նախադասության քերականական հիմնական հատկանիշ: Թեմա 9. Նախադասության գլխավոր անդամների վերաբերյալ ավանդական տեսությունը: Թեմա 10. Երկկազմ և միակազմ նախադասություններ: Թեմա 11. Նախադասության տեսակները ըստ երանգի: Թեմա 12. Ենթակա, նրա արտահայտության ձևերը: Թեմա 13. Ստորոգյալ, տեսակները. բայական, անվանական: Թեմա 14. Նախադասության երկրորդական անդամների ավանդական դասակարգումը: Թեմա 15. Պարզ նախադասության բարդեցումը: Թեմա 16. Համասեռ անդամներով նախադասություններ: Թեմա 17. Նախադասության՝ տրոհվող երկրորդական անդամներ: Թեմա 18. Միջանկյալ բառեր և ներդրյալ միավորներ: Թեմա 19. Կոչական բառեր, դրանց գործառույթը նախադասության մեջ, արտահայտության ձևերը: Թեմա 20. Նախադասության կազմության 3 կողմերը՝ ձևական, իմաստային և հաղորդակցական:

Ու/բ-0071 Ժամանակակից ռուսաց լեզու (Շարահյուսություն-2) (5 կրեդիտ)

Շաբաթական 5,33 ժամ (36 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական պարապմունք)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հաղորդել ուսանողներին Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսության վերաբերյալ համակարգված գիտելիքներ: Ուսուցանել բարդ նախադասության

բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները, բարդ նախադասության հատկանիշները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա մասնագիտորեն ըմբռնել ռուսաց լեզվի շարահյուսական համակարգը.
2. կյուրացնի շարահյուսական միավորների՝ պարզ և բարդ նախադասության մեկնության հիմնական դրույթները.
3. կյուրացնի նախադասության շարահյուսական վերլուծության գործնական հմտությունները.
4. կստանա գիտելիքներ նախադասության հաղորդակցական, շարահյուսական և ձևական հատկանիշների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Նախադասության ձևական կազմակերպումը: Թեմա 2. Նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները: Թեմա 3. Նախադասության հարացույցը որպես նրա ձևերի համակարգ, որն արտահայտում է ստորոգման կարգ: Թեմա 4. Սուբյեկտիվ եղանակավորություն հասկացությունը, արտահայտման միջոցները: Թեմա 5. Նախադասության իմաստային կազմակերպումը, նախադասության իմաստային կառուցվածքի միավորները՝ սուբյեկտ, ստորոգում և օբյեկտ: Թեմա 6. նախադասության հաղորդակցական կազմակերպումը: Թեմա 7. Միակազմ նախադասություններ: Միակազմ նախադասությունների հիմնական կառուցվածքային առանձնահատկությունները: Թեմա 8. Թերի նախադասություններ, նրանց տեսակները: Թեմա 9. Բարդ նախադասություն: Համադասությունը և ստորադասությունը բարդ նախադասության մեջ: Թեմա 10. Բարդ համադասական նախադասություններ. բաց և փակ կառուցվածքներ: Թեմա 11. Բարդ ստորադասական նախադասություններ: Թեմա 12. Ստորադասական նախադասությունների տեսակները: Թեմա 13. Բարզմաբարդ ստորադասական նախադասություններ: Թեմա 14. Շարահարությամբ կա-

պակցված բարդ նախադասություններ: Թեմա 15. Բարդ նախադասություններ տարբեր տեսակի կապերով:

Ու/բ-0077 Ռուսաց լեզվի ոճաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3,69 ժամ (8 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական պարապմունք)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Հաշվի առնելով լեզվական միավորների գործառնության հնարավորությունները՝ ուսանողների մոտ ձևավորել հստակ պատկերացում ռուսերենի գրական լեզվի ոճաբանական համակարգի և լեզվական տարբեր հարթությունների առանձին միավորների ոճաբանական հնարավորությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. հաղորդակցված կլինի տվյալ առարկայի զարգացման պատմությանը.
2. կկարողանա համադրել ոճաբանության տեսական դրույթները առանձին մակարդակի գիտելիքների հետ.
3. կկարողանա տիրապետել տեքստի վերլուծության հիմունքների մեթոդիկային, առանձին ուշադրություն կդարձնի գեղարվեստական խոսքին, որն արտահայտում է հեղինակի լեզվամտածողության առանձնահատկությունները.
4. կգտնի ոճական սխալները և կուղղի դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ոճաբանության առարկան: Ոճաբանության որպես առանձին գիտաճյուղ: Լեզվի ոճերը և խոսքի ոճերը: Լեզու և ոճ, լեզվի կիրառումը որպես ոճաբանության հիմք: Թեմա 2. Տարբեր լեզվական մակարդակների առանձին միավորների ոճաբանական հնարավորությունները: Իմաստային և ոճաբանական հոմանիշները: Թեմա 3. Բառագիտություն, նրա ոճաբանական միջոցները: Թեմա 4. Ձևաբանության և շարահյուսության ոճաբանական միջոցները: Թեմա 5. Գործառնական ոճեր՝ վարչա-

գործառական, գիտական և հրապարակախոսական: Թեմա 6. Գեղարվեստակա խոսքի ոճի հարցը: Թեմա 7. Առօրյա խոսակցական ոճ: Թեմա 8. Հոմանիշների ոճական դերը: Թեմա 9. Գոյականների հոլովական վերջավորությունների տարբերակները ոճական տեսանկյունից: Համեմատական աստիճանի ձևերի հոմանիշությունը: Թեմա 10. Բայի դիմավոր ձևերի, ժամանակաձևերի, եղանակների հոմանիշությունը: Թեմա 11. Պարզ նախադասությունների առանձին ձևերի հոմանիշությունը: Թեմա 12. Բարդ նախադասության ոճաբանություն: Թեմա 13. Պարբերություն: Պարբերության ոճաբանական գործառույթը:

Ու/բ-0072 Ռուսաց լեզվի պատմություն - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պրապմունք)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ցույց տալ գրական լեզվի զարգացումը՝ պայմանավորված լեզվի ներքին օրենքներով, քննել գրական ռուսաց լեզվի համակարգում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները, որոնք կապված են խոսակցական բարբառային հիմքի փոփոխության հետ, որի հիման վրա ձևավորվում է գրական լեզուն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուսերենի ծագման վերաբերյալ առկա տեսությունները.
2. կհասկանա ժամանակակից ռուսերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը.
3. կկարողանա որոշել կոնկրետ ստեղծագործության լեզվաոճական առանձնահատկությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գրական և խոսակցական լեզուներ: Թեմա 2. Գրական ռուսաց լեզվի պատմության շրջանաբաժանումը: Թեմա 3. Գրական ռուսաց լեզվի

ձևավորման հարցը: Թեևա 4. Հին գրական ռուսաց լեզուն: Թեևա 5. Գործավարության գրական լեզուն: Թեևա 6. Աշխարհիկ պատմական գրականության լեզուն և ոճը: Թեևա 7. Եկեղեցական գրականության լեզուն և ոճը: Թեևա 8. Մոսկովյան պետության գրական լեզուն: Թեևա 9. Երկրորդ հարավսլավոնական ազդեցությունը: Թեևա 10. 17դ. երկրորդ կեսի գրական ռուսաց լեզվի ժողովրդականացումը: Թեևա 11. Ազգային ռուսաց լեզվի ձևավորման հարցը: Թեևա 12. Պետրոսյան ժամանակաշրջանում գրական ռուսաց լեզվում տեղի ունեցած հիմնական գործընթացները: Թեևա 13. Միասնական լեզվական չափանիշների բացակայությունը Պետրոսյան ժամանակաշրջանում: Թեևա 14. Օտարալեզու փոխառությունները Պետրոսյան ժամանակաշրջանում:

Ու/բ-0072 Ռուսաց լեզվի պատմություն - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրական ռուսաց լեզվի պատմությունը, ռուսերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուսերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները.

2. կհասկանա ժամանակակից ռուսերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը.

3. կկարողանա որոշել կոնկրետ ստեղծագործության լեզվաոճական առանձնահատկությունները:

Բովանդակությունը.

Թեևա 1. Ռուսերենի ձևաբանական համակարգի պատմական զարգացումը: Թեևա

2. Հոլովման համակարգի պատմական զարգացումը: Թեևա 3. Բայ. ռուսերենի դերբայները

և նրանց պատմական զարգացումը: Թեմա 4. Խոնարհման համակարգի պատմական զարգացումը: Թեմա 5. Շարահյուսական համակարգի պատմական զարգացումը: Կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնություն. կառավարում (խնդրառություն), առողջություն, շարադասություն: Թեմա 6. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ, պարզ և բարդ նախադասություններ:

Ու/բ-0068 Ռուս բարբառագիտության ներածություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2,25 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուսաց լեզվի բարբառները, դրանց դասակարգման սկզբունքները, բարբառների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բարբառների դասակարգման վերաբերյալ առկա տեսությունները.
2. կհասկանա ռուսերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները.
3. կկարողանա տարբերել բարբառը, ենթաբարբառը, խոսվածքը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բարբառագիտությունը որպես գիտաճյուղ: Բարբառագիտության հիմնական հասկացությունները և տերմինները: Թեմա 2. Լեզուն և բարբառը պատմական և հասարակական զարգացման տարբեր փուլերում: Հատուկ լեզուներ՝ արգո: Թեմա 3. Լեզվաբանական աշխարհագրության առարկան: Թեմա 4. Ժամանակակից լեզվաբանական աշխարհագրության մեթոդներն ու սկզբունքները: Նյութի հավաքագրման աղբյուրները և մեթոդները: Թեմա 5. Ռուսաց լեզվի ընդհանուր դրույթները՝ համեմատած արևմտյան և հարավսլավոնական լեզուների հետ: Թեմա 6. Արևմտասլավոնական տարբեր

լեզուների միջև եղած ընդհանրությունները և տարբերությունները. հնչյունական և քերականական հատկությունները: Թեմա 7. Ռուսաց լեզվի հիմնական բարբառները: Հարավ-մեծառուսյան բարբառները: Թեմա 9. Հյուսիս-մեծառուսյան բարբառները: Անցումային, միջին-մեծառուսյան բարբառներ, դրանց հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները: Թեմա 10. Բարբառային բառերի հիմնական հատկությունները: Դրանց զարգացման պատմությունը: Թեմա 11. բարբառային բառերի իմաստաբանական խմբերը: Բարբառային բառապաշարի հնագույն տարրերը: Թեմա 12. Փոխառությունները բարբառներում: Թեմա 13. Բարբառային բառապաշարի բազմիմաստությունը: Թեմա 14. Նույնանիշություն: Հոմանիշություն: Թեմա 15. Նորակազմությունները ժամանակակից բարբառներում: Դարձվածաբանություն: Բարբառային բառեր:

Ու/բ-0074 Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 2,375 ժամ (14 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, ծանոթացնել ուսուցման նոր մեթոդների կիրառմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուսաց լեզվի ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում.
2. կհասկանա տեսական նյութի մատուցման ձևերը.
3. կկարողանա վարել ռուսաց լեզվի դաս՝ ըստ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռուսաց լեզվի մեթոդիկայի առարկան և խնդիրները: Թեմա 2. Ուսուցման նպատակը: Թեմա 3. Ռուսաց լեզվի մեթոդիկան որպես գիտություն: Մեթոդիկան և

հարակից գիտությունները: Թեմա 4. Մեթոդիկայի դիդակտիկ և լեզվադիդակտիկ սկզբունքները: Թեմա 5. Մայրենի լեզվի դերն ու տեղը ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում: Թեմա 6. Մայրենի լեզվի հաշվառումը: Թեմա 7. Ռուսաց լեզվի ծրագրերը ազգային դպրոցներում: Ծրագրերի բովանդակությունը: Թեմա 8. Ռուսաց լեզվի դասագրքերը հայկական դպրոցներում, նրանց կազմության սկզբունքները: Տեքստ: Թեմա 9. Ռուսաց լեզվի ուսուցման մեթոդներն ու ձևերը հայկական դպրոցում: Մեթոդների պատմությունից: Թեմա 10. Ռուսաց լեզվի ուսուցման կազմակերպման ձևերը հայկական դպրոցում: Թեմա 11. Արտադասարանային աշխատանք, նրա նպատակները: Թեմա 12. Արտադասարանային աշխատանքների տեսակները:

Գ/բ-0156Գրականագիտության հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունք)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտական և գեղագիտական հիմնական խնդիրները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականության և գեղագիտության փոխադարձ առնչությունները.

2. կհասկանա գրական ուղղությունների գեղագիտական կատեգորիաները.

3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, զանազանել գրական-գեղարվեստական ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գրականագիտություն և գեղագիտություն: Թեմա 2. Գեղագիտական միտքը անտիկ շրջանում, միջնադարում, վերածննդի շրջանում: Թեմա 3. Գեղագիտական կատեգորիաներ: Թեմա 4. Գրականությունը որպես արվեստի տեսակ, սեռեր և ժանրեր: Թեմա 5. Գրական-գեղարվեստական ուղղություններ:

Գրականության տեսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (24 ժամ դասախոսություն, 36 ժամ գործնական պարապմունք)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտության ընդհանուր համակարգը, գրականության բնույթն ու ֆունկցիաները, գրականության ու հզեբանության, գրականության ու հասարակության, գրականության ու գաղափարախոսության, գրականության ու մյուս արվեստների հարաբերակցությունը, գրական-գեղարվեստական երկի կառուցվածքը, ռիթմի, չափի, ոճի ու ոճաբանության, պատկերի, մետաֆորի, խորհրդանիշի, միֆի, պատումի յուրահատկություններ և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականության և գրականագիտության փոխադարձ առնչությունները.

2. կհասկանա գրական երկի յուրահատկությունները, բացահայտել գրական երկի բնույթն ու բնորոշ հատկանիշները,

3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, զանազանել գրական-գեղարվեստական ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գրականագիտություն և գրականությունություն: Թեմա 2. Գրականության բնույթը, ֆունկցիան, կառուցվածքը: Թեմա 4. Պատկեր, մետաֆոր, սիմվոլ, միֆ, ռիթմ և չափ: Թեմա 5. Գրական ժանրեր: Թեմա 5. Գրականության պատմություն:

Գ/բ-0179 Ռուս ժողովրդի դիցաբանություն և բանահյուսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուս ժողովրդի դիցաբանությունն ու բանահյուսությունը, բանահյուսական ստեղծագործությունների ժանրերը, նրանց առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բանահյուսության և գեղարվեստական գրականության ընդհանրություններն ու տարբերությունները.

2. կհասկանա բանահյուսական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները.

3. կկարողանա կատարել բանահյուսական նյութերի ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռուս ժողովրդի բանահյուսությունը որպես նրա ինքնատիպ մշակույթի բաղկացուցիչ մաս, որպես ռուս գրականության հիմնական աղբյուրներից մեկը: Ռուս ժողովրդի բանահյուսության գեղագիտական, ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը: Ռուս ժողովրդի դիցաբանությունը: Դիցաբանությունը որպես բանահոսության հիմք: Թեմա 2. Ռուս ժողովրդական բանահյուսությունը մինչև 20-րդ դարը: Թեմա 3. Նախնադարյան ժողովրդական ստեղծագործության ծագումը, սինկրետիկ բնույթը և կապը աշխատանքային գործընթացների հետ: Թեմա 4. Հողագործական օրացուցային ծեսերի և պոեզիայի հիմնական ցիկլերը: Օրացուցային պոեզիայի թեմաները, բովանդակությունը (Նոր տարվա, բարեկենդանի, գարնանային, աշնանային): Թեմա 5. Ընտանեկան ծիսական պոեզիան (ծննդյան, հարսանեկան, թաղման, զինակոչային): Թեմա 6. Առածներ և ասացվածքներ: Ժողովրդական հանելուկներ: Հմայություններ: Թեմա 7. Ժողովրդական հեքիաթների ժանրային առանձնահատկություններն ու դասակարգումը (հրաշապատում, իրապատում, կենդանական): Թեմա 8. Բիլինաները որպես ռուս ժողովրդի էպոս, դրանց ծագման ու դասակարգման խնդիրները: Թեմա 9. Բիլինաների հիմնական պյուժեները և կերպարները: Թեմա 7. Ժողովրդական ավանդական քնարական երգեր, դրանց թեմատիկան: Թեմա 10. Ժողովրդական թատրոնի և դրամայի անցած ճանապարհը:

Գ/բ-0180 Ռուս գրականության պատմություն (Հին և միջնադար) (3 կրեդիտ)

Շաբաթական 2,25 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական պարապմունք)

2-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուս հին գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուս հին գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռուս հին գրականությունը որպես ողջ ռուս գրականության զարգացման սկզբնական փուլ: Դրա դերը վելիկոռուսական, ուկրաինական և բելոռուսական գրականության պատմության մեջ: Թեմա 2. Գրական հուշարձան ըմբռնումը երկհանուր գրական հոսանքում, գեղարվեստական ստեղծագործության տարբերակման կապակցությամբ: Թեմա 3. Ռուս հին գրականության կրթադաստիարակչական նշանակությունը: Թեմա 4. Ժամանակի առաջադեմ գաղափարների (հայրենասիրություն, համապետական շահեր) արտացոլումը 11-17-րդ դարերի ռուս գրականության մեջ: Թեմա 5. Ռուս հին գրականության պատմական և սոցիալական բովանդակությունը, դրա գեղարվեստական արժեքը: Թեմա 6. Եկեղեցիները որպես հին ռուսական գրչության և կրթության կենտրոններ: Թեմա 7. Գրական հուշարձանների ձեռագիր բնույթը, տարբերությունը, պահպանումը: Թեմա 8. Հնագույն բանահյուսական արժեքների տեղը ռուս հին գրականության մեջ: Թեմա 9. Ռուս հին գրականության պարբերացումը՝ Կիևյան Ռուսիայի գրականություն (11-13-րդ դդ): Թեմա 10. Ֆեոդալական մասնատվածության և Հյուսիս-արևելյան Ռուսիայի միավորման շրջանի գրականություն (13-15-րդ դդ): Թեմա 11. Ռուսական կենտրոնացված պետականության ստեղծման շրջանի գրականություն (15-17-րդ դդ): Թեմա 12. Ռուս ինքնուրույն գրականության ծագումը Կիևյան պետության մեջ:

Թեմա 13. Քրիստոնեության ընդունման քաղաքական և կուլտուրական նշանակությունը (988թ.): Թարգմանական քրիստոնեական բազմաժանր գրականության տարածումը Ռուսաստանում: Թեմա 14. Տարեգրությունը որպես գրական հուշարձան: Սկզբնական ռուսական տարեգրություն՝ ,Անցած տարիների պատմություն: Թեմա 15. Գրական մյուս ժանրերի զարգացումը: Թեմա 15. ,Ասք Իգորի գնդի (արշավանքի) մասին հերոսապատումը: Նրա հայտնագործումն ու հրատարակումը: Հեղինակի հարցը և ստեղծելու ժամանակաշրջանը: Թեմա 16. Կիևյան պետության անկումը, այդ շրջանի գրականության մարգային բնույթը: Թեմա 17. Գրական հուշարձաններ թաթարական արշավանքի մասին: Թեմա 18. ,Ասք Ռուսական երկրի կործանման մասին և ,Ալեքսարդր Նևսկու վարքը: Թեմա 19. Գրական հուշարձաններ 1380թ. Կուլիկովյան ճակատամարտի մասին (Տարեգրային վիպակ, ,Զադոնշչինատե, Դմիտրի Դոնսկոյի վարքը): Թեմա 20. 15-րդ դարի 2-րդ կեսի գրական հուշարձանները: ,Մոսկվան՝ երրորդ Հռոմե տեսությունը և դրա արտահայտությունը գրականության մեջ: Թեմա 21. 16-րդ դարի հրապարակախոսությունը: Թեմա 22. Տպագրության սկիզբը Մոսկվայում: ,Դոմոստոյրե և նրա գրական արժեքը: Թեմա 23. ,Վիպակ Պյոտրի և Փեփրոնյայի մասին: Վիպակներ Դոնի կազակների կողմից 1637թ. Ազովի գրավման մասին: Թեմա 24. Աշխարհիկ տարրերի ուժեղացումը 17րդ դարի գրականության մեջ: Թեմա 25. 17րդ դարի 2րդ կեսի երգիծական վիպակները: Թեմա 26. 17րդ դարի կենցաղային վիպակներ: Թեմա 27. Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ և ռուսական մշակույթի հետագա զարգացումը համապլավոնական հիմքի վրա: Թեմա 28. Թարգմանական գործեր, ժողովածուներ, և Արևելքից ու Արևմուտքից եկած գրական սյուժեների յուրացումներ (,Մեծ հայելիե ,Հռոմեական գործերե, վիպակներ Բովա Կորոլնիչի, Երուսլան Լազարևիչի մասին և այլն): Թեմա 29. 17րդ դարի հնածեսերի գրականություն: Ավագերեց Ավվակումը և նրա վարքը: Թեմա 30. 17րդ դարի վանկային (սիլլաբիկ) պոեզիան, դրամատուրգիան և թատրոնը:

Գ/Դ-0181 Ռուս գրականության պատմություն (18-րդ դար) (4 կրեդիտ)

Շաբաթական 3,375 ժամ (30 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուս միջնադարյան գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուս միջնադարյան գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.

2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.

3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. 18-րդ դարի 1-ին կեսի ռուս գրականության ընդհանուր բնութագիրը:

Թեմա 2. Ա.Դ.Կանտեմիր: Թեմա 3. Վ.Կ.Տրեդիակովսկի: Թեմա 4. Մ.Վ.Լոմոնոսով: Թեմա

5. Ա.Պ.Սումարոկով: Թեմա 6. 18-րդ դարի երկրորդ կեսի գրականությունը: Թեմա 7. Դ. Ի.

Ֆոնվիզինը և 18-րդ դարի 2-րդ կեսի դրամատուրգիան: Թեմա 8. Գ.Ռ.Դերժավինը և 18-րդ

դ. 2-րդ կեսի պոեզիան: Թեմա 9. 18-րդ դ. 2-րդ կեսի արձակը: Թեմա 10. Ա.Ն.Ռադիշչև:

Թեմա 11. Ն.Մ.Կարամազին:

Գ/բ-0183 Ռուս գրականության պատմություն (19-րդ դար -1) (6 կրեդիտ)

Շաբաթական 4,625 ժամ (40 ժամ դասախոսություն, 34 ժամ գործնական պարապմունք)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարի ռուս գրականությունը, գրական ուղղությունները, ռուս նոր գրականության ձևավորումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի ռուս գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.

2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.

3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. 19-րդ դարի առաջադեմ ռուս գրականությանը: Առաջադեմ ռուս գրականության դեմոկրատիզմը և ժողովրդայնությունը, կապը բանահյուսության հետ, ազգային բնավորության լավագույն կողմերի արտացոլումը դրանում: Թեմա 2. Ռուս գրականությունը ազատագրական շարժման առաջին շրջանում (1800-1861): Թեմա 3. Գրական շարժումը դեկաբրիստական շարժման նախապատրաստման և վերելքի շրջանում (1800-1825): Թեմա 4. Վ.Ա.Շուկովսկի: Թեմա 5. Կ.Ն.Բատյուշկով: Թեմա 6. Պոետ դեկաբրիստները: Թեմա 7. Ի.Ա.Կռիլով: Թեմա 8. Ա.Ս.Գրիբոեդով: Թեմա 9. Ա.Ս.Պուշկին: Թեմա 10. Գրական շարժումը դեկաբրիստական ապստամբության պատմությունից հետո: Թեմա 11. Մ.Յու.Լերմոնտով: Թեմա 12. Ն.Վ.Գոգոլ: Թեմա 13. Վ.Գ.Բելինսկի: Թեմա 14. Ա.Ի.Գերցեն:

Գ/բ-0184 Ռուս գրականության պատմություն (19-րդ դար - 2) (5 կրեդիտ)

Շաբաթական 4,25 ժամ (32 ժամ դասախոսություն, 36 գործնական պարապմունք)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի 2-րդ կեսի ռուս գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.

2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.

3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

